

9 Այսուիկ հասեալ ի կատարած
Դժգոյն հաշտեան նախանձամած,
Նըստէր Յակոբ միշտ ամօթխած,
Սարգիս հանգչէր յաղթ գերապանծ:

10 Անդէն Սարգսի սըրտին հարած,
Ըղճակորայ ոճն եւ բան ցած,
Փորձեալ իբրու զիւր պիտակ տած,
Բուժիւր նոքօք ցաւն եւ խոցուած:

11 Վասն այն անդ նա ոչ եւս յուշ ած
Զաքսորանաց իւրոց գիպուած,
Այլ մանաւանդ ի մէջ էած
Ուրախ զըրոյց պատմեալ զառած:

12 Որ եւ հայցէր սըրտիւ զԱստուած
Խափանել միշտ զայն ինչ հարուած,
Որ կայր վասն իւր նեղւաց կազմած
Ոչ լըքեալ զայնս իբրեւ անկած:

13 Ապա թողեալ զՅակոբ Նալեան
Զոգայր սըրտիւ ուրախական
Առ Աբրահամ մեծ Ամիրայն,
Որ ի զարմէն էր քուլէլեան:

14 Այս այր շըքեղ քաջ տոհմական,
Մեծահամբաւ յազգս այլազան,
Ճարտարամիտ եւ խոհական,
Սիրէր զՍարգիս յար անխափան:

15 Որ եւ լեալ էր ձայն ազդական
Յորդորակաւ յունկս ամենայն
Ընդ Սարգսի փոյթ ազատման
Եւ առ նորուն նեղւաց զըղման: